Մեր կողմից շնորհաւորելով նորա քսանևհինգամեայ վաստակաւոր և արդիւնաւէտ գործունէութիւնը՝ մաղթում ենք, որ նա նոյն եռանդով շարունակէ աշխատել լուսաւոր տոնմային դաստիարակութեան։

ԶՄԻՒՌՆԻԱՅԻ Ս. ԼՈՒՍ. ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆ

Մենք ստացել ենք լիշեալ հիւանդանոցի հարիւրամեայ յօբելեանի տեղեկագիրը (1801—1901)։

Զմիւռնիայի ազգային հիւանդանոցը թէպէտ որպէս աղքատանոց գոյութիւն է ունեցել 18-րդ դարու կէսից լեռ, սակայն հիւանդանոցի է փոխուել 1801 թուին, որի նախակառուցման մարմարէ լիշատակարանը գտնուել է վերաշինութեան ժամանակ 1879 թուին։

Հիւանդանոցը իւր աւելի քան միդարեայ գոյութեան ընթացքում եղել է իսկապէս իբրև գթասիրական մի հիմնարկութիւն, պատսպարելով և դարմանելով հայ և օտար հիւանդներ ու կարօտեալներ, իսկ 1877 թուից, երբ Զմիւռնիայի առաջնորդ ընտրուեցաւ գեր. Տ. Մելքիսեդեկ վ. Մուրատեանց, վերջինիս բարոյական ազդեցութեան շնորհիւ և բարելիշատակ Սպարթալեան եղբայրների առատաձեռնութեամբ նոր զարկ ստացաւ այդ հիմնարկութիւնը, մի հոլակապ շէնք կանգնեց և գործը աւելի հաստատ հիմքերի վերայ դրուեց։ Հիւանդանոցը հետզհետէ ապահովուեց բարերարների նուիրած կամ կտակած հաստատուն կալուածներով, և այսօր հիւանդանոցի վերայ ծախս է լինում մօտ 12.000 ռուբլի տարեկան, որ սակայն ամենայն խնայողութեամբ վարուելով իսկ անբաւական է հաստատութեան մեծ կարիքները հոգալու։

Հիւանդանոցի 600 ամեայ յօբելեանը տօնելու, ինչպէս նաև կամաւոր հանգանակութեամբ այդ մեծ հիմնարկութիւնը կատարելապէս ապահովելու համար Զմիւռնիայում կազմուած է մի յանձնաժողով տեղոյն առաջնորդ Ամեն. ա. Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեանի նախագահութեամբ։

Յօբելեանը կատարուելու է տարւոյս մարտ 31-ին ս. Լուսաւորչի տօնին յաջորդող կիւրակի օրը։

Շնորհաւորելով հիւանդանոցի տօնը, խմբագրութիւնս լոյս

ունի որ մեր կողմերում ևս արձագանք կգտնէ հիւանդների և պանդուխտների խնամատարութեան համար այդ ցանկալի հրաւէրը։

«ԼՈՒՄԱՑ»-Ի ԽՄԲԱԳՐԻ ՔԱՆԵՀԻՆԳԱՄԵԱԿԸ

1901 թ. նոյեմբերին լրանում էր Գիւտ ա. քահանայ Աղանեանի դրական և ուսուցչական գործունէութեան քանեհինգամեակը. բարձրապատիւ հոր բազմաթիւ համակրողները տեսնելով նորա եռանդոտ և ժրաջան աշխատանքը յօդուտ հայրենի դրականութեան՝ միտք լղացան ընտանեկան կերպով ասնել նորա յոբելեանը՝ առաւել խրախուսելու նորան և միջոց տալու՝ իւր դրական երկերը տպագրելու։ Այդ համեստ նպատակն իրագործելու համար տ. հոր համակրողներից և ծխականներից կազմուեց մի մասնաժողով։ Մասնաժողովը մասնաւոր դիմումներ անելով զանազան անձանց՝ կարող եղաւ մի համեստ գումար ժողովել ի նպաստ յոբելեարի դրական երկերի հրատարակութեանց։

Հոկտեմբերի 28-ին համեստ ու վայելուչ կերպով ուսնուեց «Լումայ»-ի խմբագրի յոբելեանը. ժամը տասից արդէն «Լումայ»-ի խմբագրատուն էին դալիս զանազան պատգամաւորութիւններ, քահանաներ, ուսուցիչներ, ծխականներ, Թիֆլիզի հայ և ռուս մամուլի ներկայացուցիչներ, դրագէտներ և այլն։ Ցարգելի հանդիսականները մինչև ժամի երկուսը զբաղուեցին շահադրգիռ զրոյցներով և Տէր հոր ստացած և ի ցոյց դրուած նուէրները դիտելով։ Ժամի երկուսին եկան սրբազան Գարեգին եպիսկոպոս Սաթունեան, բարձրապատիւ Կորիւն, Գարեգին, Տիրայր և Մամբրէ վարդապետները, իրենց հետ բերելով Նորին Վեհափառութեան ամենայն Հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակը։

Հանդէսը բացուեց Նորին Վեհափառութեան կոնդակի ընթերցմամբ—կարդաց Տ. Գարեգին վարդապետը—. Վեհափառ Հայրիկը հոգեշունչ խօսքերով դրուատելով Հ. Գիւտ ա. քահանայի՝ ազգին և եկեղեցուն մատուցած ծառայութիւնները՝ օրհնում էր նորան և խրախուսում՝ շարունակել նոյն հոգւով գործելու։ Կոնդակի ընթերցումից յետոյ կարդացուեցան ուղերձներ կարգադրիչ մասնաժողովի, քահանաների և ծխա-